

## Կ Ա Ր Ծ Ի Ք

### Հայկազուն Ալվրցյանի՝ «Գանձարանային տաղի խորհրդանշանը»

#### դոկտորական ատենախոսության մասին

Հայկազուն Ալվրցյանի՝ «Գանձարանային տաղի խորհրդանշանը» խորագրով դոկտորական ատենախոսությունը նվիրված է հայոց միջնադարյան բանաստեղծության սակավ ուսումնասիրված բնագավառներից մեկին՝ հոգևոր խորհրդանշանին:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Եվ ահա կարծիքս կշարադրեմ հենց ըստ աշխատանքի կառուցվածքի:

**Ներածության** մեջ հեղինակը ներկայացնում է հայ հոգևոր բանաստեղծության մի ուշարժան տեսակի՝ գանձարանային տաղի խորհրդանշանի ուսումնասիրության անհրաժեշտությունն ու արդիականությունը՝ համառոտ անդրադարձ կատարելով բնականաբար նաև հարցի պատմությանը: Ի դեպ, հավելեմ, որ աշխատանքի բովանդակային և ժամանակային սահմանները շատ ավելի ընդգրկուն են, քան արտահայտված են վերնագրում:

Այսպես՝ երկու բաժնի տրոհված **առաջին գլխում** («Հայ մինչքրիստոնեական և քրիստոնեական շրջանի բանաստեղծության գաղափարական-աշխարհայացքային հիմքերը, հոգևոր երգի սկզբնավորումը և հոլովույթը») Հայկազուն Ալվրցյանը դրանցից առաջինում քննության նյութ է դարձրել նախաքրիստոնեական շրջանից մեզ հասած Գողթան երգերի պատառիկների, առասպելների ու քրիստոնեական շրջանի հոգևոր երգի գաղափարական-աշխարհայացքային ընդհանրությունները և հանգել այն ճշմարիտ եզրակացության, որ «Թե՛ նախաքրիստոնեական, թե՛ քրիստոնեական շրջանում հայ գրականության և, ընդհանրապես, մշակույթի գաղափարական-աշխարհայացքային հենքը կրոնական» է (էջ 31): Գաղափարական-աշխարհայացքային հենքի այս ընդհանրությամբ են պայմանավորված նաև երկու շրջանների բանաստեղծության սկզբունքային ընդհանրությունները՝ «կրոնական աշխարհընկալումը», «մտածողության կերպի ընդհանրությունը»՝ այլաբանությունը, և սրանցից բխող՝ խոսքի խորհրդականությունը (էջ 31):

Երկրորդ բաժնում ատենախոսը նպատակասլացորեն անդրադառնում է հոգևոր երգի սկզբնավորման և զարգացման մի շարք բնորոշ հարցերին, որոնք հայոց հոգևոր բանաստեղծության կայացման և զարգացման մեջ ունեն էական նշանակություն: Ահա դրանք՝ կցուրդ-շարականի ձևավորում ու զարգացում, Շարակնոցի կառուցվածք ու կանոնի հաստատում, շարականների մեջ հայ եկեղեցու դավանաբանության և քրիստոնեական վարդապետության հարցերի արծարծում, բովանդակության, խորհրդանշանի, լեզվի և ձևի մի շարք հարցեր, որոնք սերտորեն առնչվում են գանձարանային տաղի նույն խնդիրներին:

Այս բաժնում սկզբունքային կարելի է համարել այն իրողությունը, որ հեղինակը վիճարկում է շարականի վերաբերյալ մեծանուն հայագետ Մանուկ Աբեղյանի այն տեսակետը, թե «Մեր բանաստեղծության այս տեսակն ինքնուրույն չի եղել մեր մեջ»: Ընդունելով հատկապես քրիստոնեական աշխարհի գրական-մշակութային փոխազդեցությունների իրողությունը՝ ատենախոսը հիմնավորում է այս տեսակետի միակողմանիությունը և իր եզրակացություններով առավելաբար հանգում Գարեգին Ա. Սարգիսյան կաթողիկոսի դիտարկմանը, այն է՝ շարականները «բնիկ ազգային եւ սեփական ճաշակ մը ունին եւ ազգային հին երգերու արծագանքն են» (էջ 44): Այս տեսակետի համար հավելյալ կովան է նաև հայտնի գրականագետ Սերգեյ Ավերինցևի այն հաստատումը, թե Հայաստանի «քրիստոնեացումը տեղի ունեցավ փոքր-ինչ շուտ և ավելի վճռական, քան Կոստանդինի Հռոմում» (էջ 40):

Այս բաժնում հեղինակի սկզբունքային եզրակացություններից մեկն էլ այն է, որ «Շարականը ձևավորեց և կիրառության մեջ դրեց հոգևոր երգերի այլաբանական խոսքի խորհրդանշանը, որը հետագայում դարձավ գանձարանային տաղի նշանական խոսքի հիմնական ատաղծը» (էջ 56):

**Երկրորդ գլուխը** («Գանձարան ժողովածուի գործառույթները: Գանձարանային տաղի լեզուն, ձևը և խորհրդանշանը») բաղկացած է երկու բաժնից: Առաջինում քննվում են հոգևոր տաղի ծիսական և գրական-գեղարվեստական գործառույթներին աղերսվող սկզբունքային հարցերը, դրանց լուսաբանման ու արժևորման ուղղությամբ կատարված աշխատանքները մեր գրականագիտության մեջ: Հանգամանալից անդրադառնալով Գանձարանի տաղերին և տաղային միավորներին՝ Հ. Ավյոցյանը

եզրակացնում է, որ նշյալներին թեև գրական-գեղարվեստական տեսակետից գրականագիտության մեջ հատկացվել է պատշաճ ուշադրություն, սակայն դրանք չեն քննվել ու արժևորվել բուն՝ ծիսական գործառույթի դիտանկյունից, չի բացահայտվել այլաբանական բովանդակությունը, որը, պայմանավորված տոնի էությանը, հաճախ թելադրել է նաև տաղի լեզուն, ձևը, տաղաչափությունը, ուրիշը, մեղեդին և այլն: Հիշյալ հարցերի քննությունը հեղինակին հանգեցնում է այն համոզիչ եզրակացությանը, թե **«որքան գրական-գեղարվեստական գործառույթի ձևական (լեզվաոճական և պատկերային-արտահայտչական միջոցներ) կողմն սկսեց գերակայել, նույնքան խոսքի խորհրդական բնույթը խորացավ՝ պարուրվելով որոշ անթափանցությամբ»** (էջ 67), ինչը Նարեկացու բնորոշմամբ հնչում է այսպես.

*խորհուրդ, խորհուրդ համերամ,*

*Ձարդ երամից, զարդ:*

Երկրորդ բաժինը նվիրված է նոր բանաստեղծության ձևի, լեզվի ու խորհրդանշանի սկզբունքային հարցերին՝ նոր բովանդակության համատեքստում, և խորհրդանշանի իմաստային խմբերին: Քրիստոնեական արժեհամակարգը լուրջ փոփոխություններ մտցրեց արվեստի բոլոր ոլորտներում: Բանաստեղծության մեջ այն արտահայտվեց ոչ միայն բովանդակության, այլև ձևի հիմնական ցուցիչի՝ լեզվի մեջ:

Ատենախոսը նշում է, որ «Անտիկ պոեզիային բնորոշ պերճախոսությունը, հարուստ, շքեղ, երբեմն էլ վեհ կամ վերամբարձ ոճն ու ձևերի բազմազանությունը, բնականաբար, չէին կարող ընդօրինակման կամ ներշնչանքի աղբյուր լինել վաղմիջնադարյան ասկետիզմի հատկապես առաջին շրջանի հեղինակների համար» (էջ 82): Սակայն հետագա դարերում տաղերը, փոքր-ինչ ուշ՝ շարականներն աստիճանաբար թևակոխում են նոր փուլ, ինչպես նշում է ատենախոսը, «Վաղքրիստոնեական շրջանի հեղինակների մոտեցումները, որ հիմնականում պայմանավորված էին մինչքրիստոնեական շրջանի պերճախոս գրականության նյութապաշտ աշխարհիկությանը հակադրվելու և այն մերժելու գաղափարաբանական-դավանաբանական սկզբունքներով, հետագա դարերում, պահպանելով գաղափարական հենքը, արտահայտության մակարդակում մի շարք հարցերում (ժանրային, լեզվաոճական, արտահայտչական, պատկերավորության և այլն) վերանայվում են» (էջ 83):

Անդրադառնալով այն անառարկելի ճշմարտությանը, թե հայ հոգևոր երգի և ընդհանրապես միջնադարյան արվեստի մեկնաբանության ու արժևորման համար խորհրդանշանն ունի սկզբունքային նշանակություն, Հ. Ավրոյանն իրավացիորեն նշում է, որ «Հայ հոգևոր երգը դեռևս իր արշալույսին գիտակցեց և ստեղծեց **խորհրդանշանի իմաստային խմբերի** նվիրապետությունը՝ **բառային-արտահայտչական** կայուն համակարգով.

**ա. Իմաստային խմբերի նվիրապետությունը** ձգվում է երկնքից դեպի երկիր (Աստված – մարդ) ուղղությամբ՝ անտեսանելից դեպի տեսանելին.

1. **Երկնայիններ** (Հայր Աստված, Հիսուս Քրիստոս, Սուրբ Հոգի, սերովբեներ և քերովբեներ, հրեշտակներ).

2. **Երկրայիններ** (մարգարեներ, առաքյալներ, եկեղեցի, սրբեր, հավատավորներ և այլն).

3. **Տնօրինություններ** (Ավետում, Ծնունդ, Հայտնություն, Մկրտություն, Խաչելություն, Հարություն, Համբարձում, Հոգեգալուստ, Աստծո խոսքի տարածում, Աստծո թագավորության հաստատում)» (էջ 83):

Այնուհետ ներկայացվում է խորհրդանշանի բառային-առարկայական արտահայտությունն ըստ իմաստային խմբերի:

**Ատենախոսության երրորդ գլուխը** («Հոգևոր խորհրդանշանի տեսական-գաղափարական հիմքերը և ակունքները, ընկալումը, սահմանումը») բաղկացած է երեք բաժնից, որոնցից առաջինում հեղինակը քննության նյութ է դարձել հոգևոր խորհրդանշանի տեսական-գաղափարական հիմքերն ու ակունքները (Աստվածաշունչ մատյանը, խորանների մեկնությունները և «Երգ երգոց»-ի՝ Նարեկացու մեկնությունը: Համառոտ անդրադարձ է կատարվել նաև Դիոնիսիոս Արեոպագացու աստվածաբանական աշխատություններին և մեկնաբանական այլ աշխատությունների (էջ 87-120):

Միջնադարյան հայ հեղինակների՝ խորհրդանշանի վերաբերյալ ընկալումները ներկայացված են երկրորդ բաժնում (էջ 121-137): Այսպիսի քննությունը, անտարակույս, ինքնին արդեն գնահատելի աշխատանք է՝ ներկայացնել միջնադարի հեղինակների տեսակետներն ամփոփ կերպով և համեմատական-համադրական սկզբունքով, և հետո, որ պակաս կարևոր չէ, խորհրդանշանի վերաբերյալ ընկալումները դիտարկվել են նաև միջնադարյան համաքրիստոնեական մշակույթի խորհրդական բնույթի ու

հոգևոր խորհրդանշանի վերաբերյալ ժամանակակից տեսաբանների ըմբռնումների և ընկալումների հետ համեմատության համապատկերում: Այդ հանգամանքն ավելի լայն հնարավորություններ է տալիս հարցի վերաբերյալ պատկերացումները միասնական շղթայի մեջ դիտարկելու և ընկալելու համար:

Հայցորդը, երրորդ բաժնում վեց կետերի մեջ ամփոփելով խորհրդանշանի վերաբերյալ տեսակետներն ու բնորոշումները, ըստ իս կատարում է հոգևոր խորհրդանշանի սահմանման հաջողված փորձ, որը հնչում է այսպես. «Տեսանելի՝ այնկողմնային աշխարհը կազմող անձանց, իրերի և սրանց փոխհարաբերություններն արտահայտող հասկացությունների միջոցով անտեսանելի՝ այնկողմնային աշխարհի բուն խորհուրդները բացահայտող նշանական-այլաբանական խոսքի ատաղձը կազմող բառերն ու բառակապակցությունները կոչվում են հոգևոր խորհրդանշաններ» (էջ 141):

Ատենախոսության **չորրորդ գլուխը** («Հոգևոր խորհրդանշանը և խորհրդաբանության արտահայտությունը գանձարանային տաղերում») կազմում է աշխատանքի գրեթե կեսը. այն բաղկացած է 12 բաժիններից (էջ 144-285): Նախորդ երեք գլուխներում քննված հարցերն ըստ էության նախապատրաստում են տեսական-գաղափարական այն հիմքերը, պատկերացումներն ու ըմբռնումները, որոնց համապատկերում այս գլխում հանգամանակից քննվում է գանձարանային տաղերի խորհրդականությունը պայմանավորող հոգևոր խորհրդանշանը: Քննության նյութ են դարձել նաև Առաքել Բաղիշեցու, Մկրտիչ Նաղաշի և Կոստանդին Երզնկացու մի քանի տաղեր, որոնք թեև գանձարանային միավորներ չեն, սակայն գրված են խորհրդական խոսքի սկզբունքով և հոգևոր խորհրդանշանի բարձրարվեստ կիրառությամբ:

Այս գլխում մանրակրկիտ վերլուծության միջոցով ներկայացվում է խորհրդանշանը՝ իր նվիրապետությամբ և իմաստային խմբերով: Տասը բաժիններում հանգամանորեն քննվում է այլաբանական մտածողության ատաղձը կազմող հոգևոր խորհրդանշանը՝ իր իմաստային խմբերով՝ **երկնայիններ, երկրայիններ և խորհուրդներ**, որոնք արտահայտվում են կայուն խորհրդանշաններով՝ *բույսերով* (վարդ, շուշան, կորնկան, մանուշակ, խոլորձ, նարդոս, այլ ծաղիկներ, ծառեր), *պտուղներով* (խաղող, խնձոր, նուտ) *թռչուններով* և *կենդանիներով* (հավք-աքաղաղ, տատրակ,

բլբուլ-սոխակ), այծյամ, առյուծ), *երկնային մարմիններով* և *երևույթներով* (արփի, արեգակ, շաղ, ցող, ամպ, լուսին, աստղեր), *ակնեղենով* և *թանկագին մեքաղներով* (մարգարիտ, սարդիոն, հակինթ, դահանակ, հասպիս, կարկեհան, զմրուխտ, շափյուղա, ոսկի, արծաթ), *գույներով* (գինեգույն, կարմիր, ծիրանի, կապույտ, սև, սպիտակ) *աշխարհի կողմեր* և *փարվա եղանակներ* (հյուսիս, հարավ, գարուն, ծմեռ, աշուն) և այլնով (հաց, գինի, մեղր, խունկ, զմուռ...):

Առանձին մի բաժնում առաջին անգամ փորձ է արվում այլ տեսանկյունից քննել նմանաձայնությունը (բաղաձայնույթ և առձայնույթ), և պետք է ասել, որ աշխատության հեղինակն այստեղ անսպասելի արդյունքի է հասել՝ տաղի մեջ բաղաձայն հնչյունների քանակով պայմանավորված գաղտնագրությունների բացահայտման մեջ պարզվում է մի շատ կարևոր իրողություն, այն է՝ տաղերի հեղինակները հնչյունական ոճավորման այս հնարքն օգտագործել են խորհրդական բովանդակությամբ գաղտնագրություններ կազմելու համար, ինչի շնորհիվ նմանաձայնությունը ձեռք է բերել հոգևոր խորհրդանշանի գրեթե բոլոր հատկանիշները:

Չորրորդ գլխի վերջին՝ 12-րդ բաժնում հեղինակն անդրադառնում է խորհրդանշանի երկակի բնույթին՝ կապված նրա «ծածկեալ» լինելու հանգամանքի հետ: Այն պայմանավորում է խորհրդանշանի երկակի բնույթը, այսինքն՝ խորհրդանշանը հանդես է գալիս ոչ միայն որպես նշանական խոսքի հոգևոր-գաղափարական հենք, այլև արտահայտչամիջոց՝ անկախ այն հանգամանքից՝ հեղինակն այդ իրողությունը գիտակցե՞լ է, թե՞ ոչ:

**Հինգերորդ գլխում** («Հոգևոր խորհրդանշանի աշխարհականացումը») ատենախոսության հեղինակն անդրադարձել է հոգևոր խորհրդանշանի աշխարհականացման պատմաքաղաքական և գրական-մշակութային նախադրյալներին: 13-14-րդ դարերում մոնղոլ-թաթարական բռնապետությունը ծանր հարված է հասցնում հայությանը՝ ազգային, հասարակական, հոգևոր, մշակութային, կրթակա կյանքի բոլոր ոլորտներում, որով սկսվում է ավերումի ու քայքայման մի երկարատև շրջան: Վանքերի, վանական դպրոցների, եկեղեցիների դերի և ազդեցության թուլացման հետևանքով զգալիորեն նվազում է հոգևոր բանաստեղծության ազդեցությունը, որին աստիճանա-

բար փոխարինելու են գալիս աշխարհիկ երգն ու բանաստեղծությունը: Սկսվում է հոգևոր խորհրդանշանի աշխարհականացման գործընթացը, որտեղ կարևոր ներդրում ունի Կոստանդին Երզնկացին, թեև, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, այս հարցում վճռական է եղել Հովհաննես Թլկուրանցու դերը: Հոգևոր խորհրդանշանի աշխարհականացման կարևոր նախապայմանը դառնում է բանաստեղծության բովանդակության խնդիրը. դա քաջ գիտակցում էին թե՛ Հովհաննես Թլկուրանցին, թե՛ Հակոբ Նետրարենցը և թե՛ նրանց հետևորդ մյուս հեղինակները, որոնք հոգևոր բովանդակությամբ այլաբանությունը խիզախորեն փոխարինում են նոր՝ աշխարհիկ սիրո մոտիվով:

Թեև 15-րդ դարում Գանձարան ժողովածուի փակումով լայն տարածում է գտնում աշխարհիկ բանաստեղծությունը, սակայն հոգևոր խորհրդանշանն անմիջապես դուրս չի մղվում բանաստեղծությունից: 16-դ դարի բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցու տաղերում կարելի է հանդիպել հոգևոր խորհրդանշանի բազում դրսևորումների: Դրա արձագանքները նկատելի են նաև 17-րդ դարի բանաստեղծ Պաղդասար Դպիրի «Տաղ գարնան»-ում, որոնց առանձնաբար անդրադառնում է ատենախոսը:

Ամփոփելով հոգևոր խորհրդանշանի աշխարհականացման գործընթացի քննությունը՝ ատենախոսը հանգում է այն ճիշտ եզրակացությանը, որ «Բանաստեղծության աշխարհականացման հետևանքով հոգևոր խորհրդանշանը զրկվում է հոգևոր-այլաբանական իմաստից՝ հիմնականում հանդես գալով որպես սոսկ պատկերավորության միջոց, մի շարք խորհրդանշաններ էլ ուղղակի դուրս են մնում գործածությունից: Ստեղծված իրավիճակում հոգևոր բանաստեղծությունը, զարգացման հնարավորություն և պայմաններ չունենալով, աստիճանաբար սահմանափակվում է ծիսական գործառույթի համեմատաբար նեղ շրջանակներում» (էջ 314):

Նկատենք, որ ատենախոսության **եզրակացությունները** ամփոփում են հեղինակի ամբողջ ասելիքը, **սեղմագիրը** ներկայացնում է գիտավերլուծական դրույթներն ու բովանդակության կառուցվածքային ընդգրկումը, իսկ տպագրված բոլոր հրապարակումները համապատասխանում են առաջադրված թեմային:

Պետք է արձանագրել, որ ատենախոսության մեջ նկատելի են նաև որոշ վրիպումներ և բացթողումներ, որոնք թերևս անխուսափելի են նման ընդգրկում ունեցող աշխատանքների համար:

Նախ, ինչպես նշեցի սկզբում, աշխատանքի բովանդակային և ժամանակային սահմանները շատ ավելի ընդգրկուն են, քան արտահայտված են վերնագրում:

Թվերով արտահայտված խորհրդանշանների քննության ժամանակ հեղինակն անդրադարձել է թվի խորհրդական բնույթի վերաբերյալ միջնադարյան և ժամանակակից մի շարք հեղինակների, սակայն աչքաթող է արել «Սակս բացայայտութեան թուղ» ուշարժան աշխատությունը:

Երկրորդ գլխի «Հոգևոր երգի սկզբնավորումը» վերնագրի տակ հեղինակը թեև հանգամանալից խոսել է Շարակնոցի մասին, սակայն, կարծում եմ, աշխատանքն ավելի կշահեր, եթե առավել հանգամանալից խոսվեր շարականներում հոգևոր խորհրդանշանի գործածության, հոգևոր խոսքի մեջ դրա ունեցած դերակատարության և փարածվածության մասին: Սա ասում եմ նաև որպես առաջարկ՝ հետագայում հաշվի առնելու համար:

Առկա են նաև տեխնիկական բնույթի որոշ վրիպակներ, որոնք, անշուշտ, անուշադրության հետևանք են:

Նշված վրիպումներն ու թերությունները, սակայն, որևէ կերպով չեն ստվերում ներկայացված աշխատանքի գիտական արժանիքները: «Գանձարանային տաղի խորհրդանշանը» աշխատանքը լիովին բավարարում է դոկտորական ատենախոսությանն առաջադրվող պահանջները, և նրա հեղինակ Հայկազուն Ավրոցյանը արժանի է իր հայցած՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Կ. Կարսյան  
բանասիր. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Ալ. Ա. Մակարյան

Կրթ. և գիտ. նախարարության  
հավանություն



Մ. Ա. Մակարյան  
1.06.2021 թ.

27.05.2021